Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2021 թ.
փետրվարի 12 - ի N 114 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Էներգախնայողությունը ապահովելու նպատակով նախատեսվում է Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Եղծահող համայնքի դպրոցի, Շուշիի շրջանի Եղծահող համայնքի մշակույթի տան, Շուշիի շրջանի Եղծահող համայնքի համայնքային կենտրոնի տանիքներին այլընտրանքային արևային /ON GRID/ ֆոտովոլտային կայանների տեղադրում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Եղծահող համայնք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 5,360,000 դրամ, որից Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Եղծահող համայնքի դպրոց՝ 1,860,000 դրամ, Շուշիի շրջանի Եղծահող համայնքի մշակույթի տուն՝ 1,860,000 դրամ, Շուշիի շրջանի Եղծահող համայնքի համայնքային կենտրոն՝ 1,640,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Եղծահող համայնքի դպրոց, Շուշիի շրջանի Եղծահող համայնքի մշակույթի տուն, Շուշիի շրջանի Եղծահող համայնքի համայնքային կենտրոն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ամբողջ ծրագիրը նախատեսվում է իրականացնել՝ 2021 թ. մարտի 02-ից մինչև 2021 թ. մայիսի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Եղծահող համայնքի դպրոցի, Շուշիի շրջանի Եղծահող համայնքի մշակույթի տան, Շուշիի շրջանի Եղծահող համայնքի համայնքային կենտրոնի տանիքներին այլընտրանքային արևային (ON GRID) ֆոտովոլտային կայանների տեղադրում: Ծրագրերը նախատեսվում է իրականացնել՝ 2021 թ. մարտի 02-ից մինչև 2021 թ. մայիսի 31-ը: Արժեքը՝ 5,360,000 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Այլընտրանքային (ON GRID) ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ 5,360,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ